

Բյուլետեն Բուսաբանական այգու, № 3, 1941 թ., Երևան

Հ. Հ. ՄԱԿՐԱՅԱՑ

ՅՈՒՂԱՏՈՒ ԿՏԱՎՀԱՏԻՑ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԵՐԿՈՒ ԲԵՐՔ
ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմֆանի Բուսաբանական այգում, 1938 թվից սկսած ուսումնասիրություններ են կատարվում կտավհատների վերաբերյալ մի շարք սելեկցիոն և ադրուտիվնիկական հարցերի պարզաբանման համար։ Այդ թվում փորձ է դրված պարզեցում հայաստանում տարածված յուղատու կտավհատից մեկ տարում երկու բերք ստանալու հնարավորությունը։ Սակայն, նախքան ստացած արդյունքների նկարագրությանն ու պարզաբանմանն անցնելը, կարենու ենք համարում մի քանի խոսք ասել կլիմայական ու հողային այն պայմանների մասին, որոնց մեջ դրված է եղել փորձը։

Բուսաբանական այգու, կալցիումով հարուստ կավային հողն իր բաղմաթիվ մաղական անցքերի միջոցով ուժեղ կերպով գոլորշիցնում է նույնիսկ հողի ներքին շերտերի ջուրը և, այդ պատճառով, հողն արագ կերպով չորանում է։

Բավական բարձր, տարեկան միջին ջերմաստիճանի ու արեկի կիզիչ ճառագայթների պայմաններում, շատ քիչ են մթնոլորտային տեղումները։

Առանձին ամիսներում (ապրիլ, մայիս, հունիս և այլն) տեղացող անձրեկվների քանակը կտավհատի մինիմում պահանջի (80—100 մմ) նկատմամբ շատ քիչ է, այն էլ հատկապես նրա աճման ու զարգացման առաջին փազում։ Տարեկան տեղումների միջին գումարից հայտնի է, որ ցածրավայրի պայմաններում այդ քանակությունը չի կարող բավարարել խոնավության նկատմամբ մի շարք բույսերի, ինչպես և կտավհատի ունեցած պահանջը։ Վերջինիս լավ աճի համար տեղումների տարեկան միջին քանակությունը 450—500 մմ-ից պակաս չպետք է լինի։ Այս հանգամանքները նկատի ունենալով, անհրաժեշտ է մինչև պտուղների հասունացումը մի քանի անդամ ջրել կտավհատի դաշտը։

Թելատու սորտերի հետ համեմատած, յուղատու կտավհատը զնորհիվ լավ զարդացած ու խոր գնացող արմատային սիստեմի, ջրի ավելի քիչ պահանջը ունի։ Իր այդ հատկության շնորհիվ է, որ նա լայն տարածված է գլխավորապես հարավային շրջաններում։ Զնայած դրան, ինչպես մյուս սորտերի, այնպես և սրա բերքատվությունը կապված է՝ գարնանը միահամասը տեղացող անձրեկների կամ արհեստական ուսուցումների քանակից։

Մյուս գործոնների հետ համեմատած՝ մեր փորձերի մեջ ջուրը կարենոր տեղերից մեկն է գրավել։ Եվ առանց սխալինելու կարելի է ասել, որ նրանով է պայմանավորվում այդ կուլտուրայի երկրորդ վեգետացիան և բերքատվությունը։

Անդրադառնալով փորձին, պետք է ասել, որ այն կատարվել է շատ պարզ մեթոդով և ունեցել է հետեւյալ ընթացքը.

Սերմերն ստացվել են կոտայքի շրջանի Քյուլիջա գյուղի կոլխոզից, ծանքը կատարվել է 1939 թվի ապրիլի 11-ին: Ծիւերը մասսայաբար երեւացել են նույն ամսի 22-ին: Մինչև առաջին բերքահավաքը հողակտորը ջրվել է չորս անգամ, իսկ քաղհանվել է երկու անգամ: Առաջին վեգետացիոն շրջանը վերջանալուց հետո բերքը հավաքվել է օգոստոսի 2-ին: Հաշվի առնելով, որ ցողունիքի ճյուղածքի տարրերը մասերը կարող են զարգացման տարրեր ստադիաներում գտնվել (ակադ. Տ. Դ. Լիսենկո, 1936), ցողունները հատված են եղել միահավասար, հիմնական հանգույցից 6—7 ամ, իսկ հողից 9—10 ամ բարձրության վրա:

Բերքահավաքից հետո խոզանն անմիջապես ջրվել է: Այնուհետև, երկրորդ վեգետացիայի ընթացքում մարգերը ջրվել են երկու անգամ: Խոզանացրից մի երկու օր հետո, հատած բույսերի բարձր մնացած ցողունային մասերի վրա առաջ են գալիս բողոքներ ու ճյուղեր Երկրորդ ջրի գեղքում կազմակերպվում են հատուկենտ կոկոններ ու ծաղկիկներ: Իսկ երրորդ ջուրն արդին համընկնում է նրա հասունացման շրջանին:

Արագ ճյուղավորվելու շնորհիվ, կտավիատն այդ ժամանակ թույլ չի տալիս շատ մոլախոտեր զարգանան, որի հետևանքով քաղհանը կատարվում է մեկ անգամ: Խնչվես հայտնի է, կտավիատի դաշտը սկզբնական շրջանում ձեռքով են քաղհանում, իսկ դա մեծ դժվարություն է ներկայացնում: Սակայն այս դեպքում քաղհանը կարելի է կտավրել հողուրագով, որովհետև կտավիատի բույսերը մոլախոտերի համեմատությամբ շատ փարթամ են լինում:

Հստ մեր դիտողություններ՝ բողոքներ ու ընձյուղներ չեն տվել միայն այն բույսերը, որոնք նախքան հատումն ունեցել են թույլ աճ: Օրինակ՝ 305 հատած բույսերից բողոքներ ու ընձյուղներ չեն տվել 35 բույս: Դրանցից 27 բույս կամ 7,5% ը ամբողջովին չորացել ոչնչացել էին, 8 բույս, կամ 2,3% ը, չնայած բողոքներ ու ընձյուղներ չեն տվել բայց մնացել էին դալար: Այլ կերպ ասած՝ վերջիններս կորցրած չեն եղել իրենց արմատների աճման ունակությունը: Հատումից հետո 2—3 ճյուղ ունեցող բույսերը նախօրոք ունեցել էին միջակ աճ: Այսպիսով, թե բոլորովին բողոքներ չտվող և թե թվով ընձյուղներ տվող բույսերն անհամեմատ ավելի թույլ էին, քան նրանք, որոնք հատումից առաջ ուժեղ աճ էին ունեցել:

Խնչվես տեսնում ենք, հատվող բույսերը նախօրոք պետք է լինեն ուժեղ, փարթամ աճած, այլապես նրանք գժվարությամբ են առաջ բերում բողոքներ և ճյուղեր, իսկ հակառակ դեպքում լինում են շատ նվազ: Ահա թե ինչու անհրաժեշտ է հատուկ ուշադրությամբ զբաղվել այդ կուլտուրայի սերմարուծության և ագրոսեխնիկական խնդիրներով, որովհետև գրանցով է պայմանավորվում ինչվես մեր փորձի, այնպես և կտավիատի մյուս ցանքերի բերքատվության էֆեկտիվությունը: Պետք է նկատել, որ առաջին վեգետացիոն շրջանի առաջին փաղում (ծլեռուց մինչև ծաղկելը) բույսի վերերկրյա մասերն աճում են շատ դանդաղ: Մեր կարծիքով, դա պետք է բացատրել նրանով, որ տվյալ փաղում կազմակերպվում են արմատները, որոնց վրա է ծախսվում պատրաստած սննդանյութերի մեծ մասը: Իսկ

գա ապացուցվում է բույսի զարդացման առաջին փաղի համեմատաբար երկար տևողությամբ, որ երեսում է տվյալ շրջանի աճման ու զարդացման ֆազաների վերաբերյալ ստորև բերած թվերից:

Աղյուսակ № 1

Ժամանելի ժամանակը	Մեջլու ժամանակը	Մասսայական ժաղկման ժամա- նակը	Պառւղների հասունացումը	Առաջին վեգետացիոն շրջանի վերջը և բեր- քահավաքը
11/IV—39 թ.	22/IV—39 թ.	15/VI—39 թ.	29/VII—39 թ.	2/VIII—39 թ.

Աղյուսակից երեսում է, որ ծերելուց մինչև մասսայական ծաղկումը տե-
վում է մոտավորապես 60—65 օր, իսկ սերմատուփերի կազմակերպման ու
հասունացման համար հատկացված համեմատաբար քիչ ժամանակը (40—45 օր)
բացարձում է արմատների նախաղես լրիվ կազմակերպված վիճակով: Մյուս
կողմից՝ նույն աղյուսակում բերված թվերը պարզ ու որոշակի ցույց են տա-
լիս, որ կտավիատը վերը նշած պայմաններում հասունանում է 110—115
օրում:

Միանգամայն այլ պատկեր են ներկայացնում բերքահավաքից հետո
մնացած ցողունայի մասերի վրա առաջացած նոր ընձյուղների աճման ու
զարդացման ֆազաները, որ երեսում է № 2 աղյուսակից:

Աղյուսակ № 2

Ցողունների համան ժամանակը	Մասսայական ժաղկման ժամանակը	Պառւղների հասու- նացման ժամանակը	Երկրորդ վեգետացիոն շրջանի վերջը և բեր- քահավաքը
2/VIII—39 թ.	5/IX—39 թ.	25/XI—39 թ.	3/XII—39 թ.

Ինչպես տեսնում ենք, այսակ ծերերի առաջացման ու արմատների
կազմակերպման վրա գործադրվող ժամանակը խիստ կրճատված է, որովհե-
տեւ այս դեպքում ընձյուղներն առաջ են գալիս հատած բույսերի մնացած
ցողունների վրա: Սերմերից առաջացած բույսերի հետ համեմատած, նոր
ընձյուղների անմասն միջավայրի պայմաններն ուժեղ կերպով փոփոխվելու
պատճառով արագանում է անկանոն առաջացությունը (92 օր) պետք է վերագրել
հողի մեջ տարածված ու խորը գնացած կ արդեն լավ կազմակերպված ար-
մատային սիստեմին, որովհետեւ «այդպիսի ընձյուղները ուժեղ, հին արմա-
տային սիստեմ ունենալով» ավելի արագ և ավելի հզոր կանեն» (ակադ.
Տ. Դ. Լիսնկո, 1936 թ.):

Մինչև երկրորդ վեգետացիայի վերջը կտավիատի արմատը շարունա-
կում է աճել ու խորանալ: Մաղկման ժամանակ նրա զիսավոր արմատն ու-
նենում է ուժեղ աճ, հասնելով մոտ 130 սմ-ի և շարունակում է աճել մինչև
բույսի կյանքի վերջը (Ա. Վ. Կրասովսկայ, 1929 թ.), մինչդեռ արևածաղկի,
խաշխաշի և գարնանացան մի շարք այլ բույսերի արմատներն այդ ժամա-

նակ արգեն ձևավորված են և ժաղկման սկզբում համարյա դադարում են աճելուց (Ա. Ի. Կոպչօ, 1933 թ.):

Սովորաբար կուլտուրական կտավիատը հասունանում է 80—115 օրում, և քանի որ այս դեպքում նա իր առաջին վեգետացիան ավարտում է լրիվ, ուստի ոչ մի կասկած չի կարող լինել պտուղները չհասունացած քաղելու կամ երկրորդ բերքն առաջնի հաշվին կատարելու մասին: Երկրորդ վեգետացիան՝ սկավելով օգոստոսի 2-ից և տևելով մոտ 92—100 օր, նույնպես ունենում է աճման ու զարգացման լրիվ ցիկլ Սա ցույց է տալիս, որ այդ ըույսն ի վիճակի է երկու վեգետացիոն շրջան անցնելու:

Բացի վերը բերված փաստերից, երկրորդ բերք ստանալու հիմնական պատճառը նաև այն է, որ կտավեատի սաղմնային հյուսվածքն ընդունակ է տալու նորանոր բողբոջներ և ընձյուղներ: Միաժամանակ նոր ընձյուղներ տվող ցողունները, անկասկած, ստադիական զարգացման ավելի բարձր աստիճանի վրա են գտնվում, քան սերմերից նոր զարգացողները:

Անկախ հասունաներից, կտավիատն ընդունակություն ունի նոր ընձյուղներ տալու, անգամ բերքը հասունանալուց ու թափվելուց հետո: Օրինակ՝ մարգերում մնացած բույսերը նույնպես նորանոր բողբոջներ և ընձյուղներ էին տվել: Սակայն պետք է նշել, որ այդ ընձյուղները մեծ մասամբ առաջանում են ցողունի ավելի բարձր գոտում՝ գլխավորապես վերին ճյուղավորության շրջանում: Դրանք երևացին ավելի ուշ, զարգացան ավելի դանդաղ և տվեցին ավելի քիչ սերմատուփեր, քան այն ճյուղերը, որոնք առաջացել էին հատած բույսերի մնացած ցողունների վրա: Այս երեսութը, անկասկած, նույնպես պետք է բացատրվի բույսի տարբեր յարուսների ստադիական տարբեր աստիճաններով: Դրա հետ միասին չի կարելի հաշվի չառնել այն միջավայրը, որն իր ազդեցությունն է թողնում բույսի բնույթի, դաստիարակման վրա. և, շատ հաճախ, զարգացման համար պահանջվելիք գործոնների նորմալ կոմպլեքսի առկայությամբ պետք է բացատրել բույսի նմանահատկությունների դրսևորումը:

Մյուս կողմից՝ առաջին բերքից ինքնացանք կատարված սերմերից առաջացած բույսերը հոկտեմբերի սկզբին դեռ չէին աղատվել շաքիլային տերևներից, այնինչ հատած բույսերի մնացած ցողուններից առաջացած ընձյուղներն այդ ժամանակ ունեին մասսայական սերմատուփեր: Այստեղից պարզ է, որ ցողունները չկտրած և ինքնացանքի միջոցով ստացված բույսերն ավելի ցածր արժեք ունեն, քան կարած ցողուններով բույսերը:

Անդրադառնալով երկու վեգետացիոն շրջանների բերքատվության էլեմենտներին, պետք է ասել, որ նրանք համարժեք են իրար և նրանց միջև չկան աչքի ընկնող խորը տարբերություններ:

Աղյուսակ № 3

Վեգետացիոն շրջանները	Ցողունների միջին բարձրությունը	Ճյուղերի միջին թիվը	Սերմատուփերի միջին թիվը
1-ին վեգետ. շրջ.	34,5 սմ	4,8 հ.	51,0 հար
2-րդ > >	33,7 սմ	4,2 >	48,9 >

Այս աղյուսակում բերված բարձրության ու ճյուղավորության միջնական տարբերությունները բացատրվում են երկրորդ վեգետացիոն շրջանի համեմատարար ոչ լրիվ ազգութեանի կական միջոցառություններով և գլխավորապես նրանով, որ այդ ժամանակ եղանակը որոշ չափով ցրտել է։ Շատ հավանական է, որ նույն պատճառներով պտուղների հասունացումն արագանում է, նախքան լրիվ կազմակերպվելը։

Առաջին և երկրորդ վեգետացիաների օրերի թիվը ցույց է տալիս, որ մեր ցանած կտավհատը համեմատարար ուշահաս սորտ է եղել; Եվ այդ է պատճառը, որ երկրորդ վեգետացիոն շրջանը գեռ չափարտված, մեր բույսերը ենթարկվեցին աշնանային ցրտերին։ Դրա հետ միասին, ավելի վաղ (15/X—39 թ.) սկսված ցուրտ, անձրեսու և ամպամած օրերի հաճախակի կրկնվելին արգելք դարձավ կազմակերպված պտուղների նորմալ հասունացմանը։ Մեր կարծիքով, սրանք են այն օբեկտիվ պայմանները, որոնք երկրորդ վեգետացիոն շրջանի երկարացման պատճառ հանդիսացան։

Սակայն այդ աննպաստ հանդամանքը հնարավոր է վերացնել ցանքը վաղ գարնանը կտարելով՝ այն հաշվով, որ ապահովված լինի առաջին և երկրորդ վեգետացիաների համար պահանջվող օրերի թիվը, իսկ դա հնարավոր է մի շարք կտավհատացան շրջաններում։ Այս գործում կարեւը նշանակություն ունեն վաղահաս, ցրտադիմացկուն սորտերը, որոնք պետք է ստացվեն տեղական սորտերից՝ ընտրության միջոցով։ Բացի այդ, ապացուցված է (Ա. Փ. Բելյանկով, 1939 թ.), որ յուղատու կտավհատը 15 օր+2—+40-ի տակ յարովիզացիայի ենթարկելու դեպքում վեգետացիոն շրջանը կրճատվում է 10—12 օրով։ Սա ևս ապահովում է, որ երկրորդ բերքը ժամանակին հասնի։ Նույն հարցի կապակցությամբ և առհասարակ այդ կուլտուրայի վեգետացիոն շրջանը երկարացնելու նպատակով, աշխատանքներ են տարվում աշնանացան ռասա ստանալու համար։ Այդ ուղղությամբ կտարված փորձերը տվել են գրական արդյունք։ Մինչև այժմ եղած տվյալներից երեսում է, որ ցրտադիմացկուն կամ աշնանացան ձևեր փնտուելու աշխատանքները որոշ հիմք ունեն և այդ հարցն արժանի է խորը հետազոտության։

Այս հարցերի ուսումնասիրությունը, անկասկած, դրական կերպով կանդրադառնա երկրորդ բերքի վաղահասության խնդրի լուծման վրա։ Մյուս կողմից՝ ուշահաս ձևերի առկայությամբ և այդ կուլտուրայի ռայրնացման բացակայությամբ պետք է բացատրել, որ շատ տեղերում բերքը չի հասունանում և հաճախ ցրտերից վնասվում է։

Աղյուսակ № 2

Վեգետացիոն շրջ.	Սերմատու- փերի միջին երկար. մմ	Սերմատու- փերի միջին լայնութ. մմ	Սերմ. միջին երկար. մմ	Սերմ. միջին լայն. մմ	1000 հատ սերմի կցիոն գր.	և մ²-ից ստաց- ված բերքի քանակը գր.
Առաջին	6, 1	5, 0	4, 8	2, 9	6, 4	229, 8
Երկրորդ	5, 9	4, 9	4, 7	2, 4	6, 0	180, 0

Ինչպես աղյուսակից երեսում է, սերմատուփերի և սերմերի մեծությունների մեջն նույնպես աչքի ընկնող խոշոր տարբերություններ չկան։ Առաջին բերքից ստացված 1000 հատ սերմի կշիռը 6,4 գրամ է, իսկ երկրորդ բերքի գեպքում՝ 6,0 գրամ։ Այդ ապացուցում է սերմերի նորմալ զարգացած լինելը, որովհետև 1000 հատ սերմի կշիռը, նայած ըույսի աճման ու զարգացման պայմաններին, սովորաբար տատանվում է Յ և Շ գրամի միջև։

Չորս քառակուսի մետր հողամասում եղած 305 հատ ըույսից առաջին բերք ստացվել է 229,8 գրամ, իսկ նույն բույսերի հատումից հետո բողոքաներ ու ընձյուղներ տված 270 բույսից՝ երկրորդ բերք եղել է 180,0 գրամ։ Մյուս բացասական գործուների (վերևում բերված) հետ միասին, անկասկած, երկրորդ բերքի պակասի վրա պետք է անդրադարձած լինի ոչնչացած (Յ հատ) բույսերի թիվը, որոնց մասին ասվեց վերևում։

Հեկտարի վերածած, մոտավոր հաշիվներով, առաջին վեգետացիոն շրջանից ստացվում է 5,75 ցենտ. բերք, իսկ երկրորդից՝ 4,5 ցենտներ։

Այսպիսով, եթե անգամ չխոսենք մեկ տարում երկու բերքից ստացված 10 ցենտներ և ավելի բերքի մասին, այլ միայն նրանց 5,0 ցենտ. միջին բերքը համեմատելու լինենք Հայաստանի տարբեր շրջաններից ստացված 2,2—3,5 ցենտներ միջին բերքի հետ (ըստ Հողժողկոմատի տվյալների), կտեսնենք, որ մեծ տարբերություն գոյություն ունեն։

Քիմիական անալիզը տվեց չափազանց հետաքրքրական ու արժեքավոր տվյալներ (աղյուսակ № 5):

Առյունություն № 5

Ո՞ր բերքից է	Ցուղի տոկոսը	Ցողային թիվը	Մանոթություն
Առաջին երկրորդ	40, 5 37, 15	170, 1 170, 5	Անալիզները կատարվել են Համալսարանի՝ բույսերի ֆիզիոլոգ. ամբիոնում

Առաջին և երկրորդ բերքերի սերմերից ստացված յուղի տոկոսները շատ նորմալ են և կարելի է ամենաբարձրը համարել շատ վայրերում ստացվող յուղի տոկոսներից։ Օրինակ՝ Ստեփանավանի շրջանում տարածված կտավինատը սովորաբար $30^0/_{\circ}$ է ավելի յուղ չի տալիս, իսկ մեկ տարում $78^0/_{\circ}$ յուղի բարանսն անհամեմատելի է և խոշոր առավելություն ունի մինչև հիմաստացվող $32—42^0/_{\circ}$ յուղից։

Առաջին բերքի յուղն իր գույնով մոտենում է լեռնային մասերում մշակվող կտավինատից ստացվող յուղին, իսկ երկրորդ բերքինը նմանվում է ստորին գոտում հարմարված բույսերի յուղին, որը քիչ պղտոր գույն ունի։ Ցուղերի որակական այլպիսի տարբերությունը պետք է բացատրել նրանով, որ բույսերը տարբեր վեգետացիոն շրջաններում տարբեր պայմաններում են գտնվել ել շատ հավանական է, որ նույն պատճառներից են ստացվել նաև յուղի տոկոսի ու յոդային թվի այդ տատանումները։ Առաջին գեպքում սերմերից առաջացած բույսերը մինչև պտուղների հասունացումն աճել են ավելի

մեղմ՝ աստիճանաբար գեղի տաքը գնացող կլիմայական պայմաններում, և պառազները կազմակերպվել ու հասունացել են լուսառատ և տաք օրերին. այս գեղքում սերմերի մեջ կուտակվում է մեծ քանակությամբ յուղ (Иванов, 1926 թ.): Նույն բույսերի հասունացած մնացած ցողունների վրա առաջացած ընձյուղները մինչև ծաղկումը լինում են ավելի տաք պայմաններում, իսկ նրանց սերմերի հասունացումը կատարվում է համեմատաբար ավելի մեղմ եղանակներին:

Սերմերի հասունացման շրջանում կլիմայի մեղմությունը սովորաբար գրական ազդեցություն է գործում նաև յոդային թվի վրա, որ մեր փորձերում նույնպես նկատվում է:

Արտաքին միջավայրի պայմանների այդպիսի փոփոխությունը անկասկած, իր ազդեցությունը պետք է թողնի տարբեր բերքերից ստացված յուղերի քիմիական կազմության վրա:

Այս տվյալները մեկ անգամ ևս ապացուցում են, որ ստորին և նախազեռային գոտիներում կտավհատի երկրորդ բերք ստանալը տնտեսապես արդյունավետ է, որովհետեւ, ինչպես տեսնում ենք, բերքատվության ամենակարենոր հատկանիշների՝ յուղերի տոկոսների և յոդային թվերի միջև նույնպես մեծ տարբերություն չկա:

Աշխատանքի վերջում խորին շնորհակալություն եմ հայտնում գիտության վաստակավոր գործիչ Ա. Գ. Արարատյանին՝ կտավհատի վերաբերյալ իմ ըստը աշխատանքների ընթացքում տված խորհուրդների և ցուցումների համար:

Л и т е р а т у р а

1. Академик Т. Д. Лысенко, 1936 г.—Теоретические основы яровизации. Сельхозгиз.
2. А. Ф. Вельденкова, 1939 г.—Особенности стадийного развития различных форм льна. Академия наук СССР.
3. Е. В. Элади, 1938 г.—Лен.
4. А. И. Купцов, 1933 г.—Основы полевой культуры масличных растений.
5. И. В. Красовская, 1929 г.—Корневая система различных сортов льна.
6. Проф. Н. Н. Иванов, 1926 г.—Химический состав культурных растений и значение его для сельского хозяйства.
7. А. Слибин и Ф. Чебуракан, 1936 г.—Льняное семеноводство.
8. Академик И. В. Якушкин, 1936. Агротехника. Сельхозгиз.
9. Е. А. Столетова, 1929—1930 гг.—Полевые и огородные культуры Армении. Труды по прикладной ботанике, генетике и селекции. Том XXIII, вып. 4.

А. О. Մկրտչյան

О получении двух урожаев льна-кудряша за год

1. Начиная с 1938 года в Ботаническом саду АрмФАН'a проводятся опыты по получению двух урожаев за год распространенного в Армении льна-кудряша.

2. Опыты проводятся в предгорной зоне, где при средней годовой температуре 10—12,5° и жарком лете выпадает очень мало осадков. В этих условиях полив в наших опытах занимает одно из важнейших мест.

3. Семена льна-кудряша для опыта получены из колхоза с. Кулджа Котайкского района (предгорная зона).

Посев произведен 11 апреля, проростки появились 22-го того же месяца. После массового созревания плодов, 2-го августа была проведена подрезка растений, у которых ножницами удалялся стебель на высоте 6—7 см от первого узла, или 9—10 см от поверхности земли. Через несколько дней после пожнивного полива на оставшихся появились почки, от которых развились новые побеги. При втором поливе начинали показываться единичные бутоны, а при третьем—созревали плоды второго урожая.

Благодаря быстрому росту ветвей лен заглушал все сорняки.

4. Возможность второго урожая обусловливается способностью льна-кудряша дать новые почки и побеги. Одновременно нужно указать, что эти последние побеги свое развитие начинают с более высокой ступени стадийного развития, чем растения из семян.

5. Второй урожай семян мало чем отличается от первого. Например: 1000 семян первого урожая весят 6,4 г, второго урожая—6,0 г.

Это показывает, что и при втором урожае семена успевают созревать достаточно. По предварительным данным, первый урожай равен 5,75 ц, второй—4,5 ц с га.

6. Очень нормальны также показатели масла первого и второго урожая. В семенах первого урожая процент масла равен 40,5 при iodном числе 170,1, второго урожая соответственно—37,15 и 170,5. Однако по внешнему виду эти масла несколько отличаются друг от друга: масло первого урожая по цвету и прозрачности более похоже на масло кудряша, разводимого в горных районах; второго же урожая—слегка мутное и напоминает масло низменных районов.

7. Таким образом, при двух урожаях льна-кудряша в условиях предгорной зоны Армении получается почти вдвое больше масла с га, причем себестоимость единицы второго урожая (следовательно и всего урожая) должна быть гораздо меньше, чем первого (или лишь одного) урожая.